ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ՍԻՐՈՂԱԿԱՆ ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ
ՄՐՑԱՇԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարը (այսուհետ՝ Մրցաշար) անցկացվելու է երկու տարիքային խմբերով՝

1-ին տարիքային խումբ՝ 18-ից 35 տարեկան (1987-2004 թթ. ծնված) կանայք, 18-ից 40 տարեկան (1982-2004 թթ. ծնված) տղամարդիկ,

2-րդ տարիքային խումբ՝ 36 (1986 թ. ծնված) և բարձր տարիքի կանայք, 41 (1981 թ. ծնված) և բարձր տարիքի տղամարդիկ:

Մրցաշարի մասնակիցները պետք է մրցավայր ներկայանան իրենց անձնական ռակետներով:

Մրցաշարի համայնքային մրցումներին մասնակցելու համար անհրաժեշտ է դիմել համապատասխան համայնքապետարան:

Մրցաշարի մարզային մրցումների անցկացման կարգն ու պայմանները որոշում են համապատասխան ՀՀ մարզպետարանները և Երևանի քաղաքապետարանը:

Մրցաշարին չեն կարող մասնակցել.

- այն մարզիկները, ովքեր վերջին 5 տարիների ընթացքում մասնակցել են սեղանի թենիսի ՀՀ առաջնություններին և միջազգային մրցաշարերին,
- բուքմեյքերական գրասենյակների կողմից կազմակերպվող վճարովի խաղերի մասնակիցները:

«ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի Արմավիրի մարզային և համայնքային փուլերի անցկացման ժամանակացույց

Հ/h	**Համայնք**	**Բնակավայր**	**Տեղը**	**Օրը**
1	Արմավիր	Արմավիր	Արմավիր քաղաքի մարզադպրոց	23.01.2022թ.
2	Մեծամոր	Մեծամոր	Մեծամոր քաղաքի մարզադպրոց	27.01.2022թ.
3	Էջմիածին	Էջմիածին	Էջմիածին քաղաքի թիվ 1 մարզադպրոց	29.01.2022թ.
4	Փարաքար	Փարաքար	Փարաքարի մարզադպրոց	24-25.01.2022թ.
5	Խոյ	Դաշտ	Միջնակարգ դպրոց	31.01.2022թ.
6	Արաքս	Ապագա	Մշակույթի տուն	26-27.01.2022թ.
7	Բաղրամյան	Քարակերտ	Մշակույթի տուն	27.01.2022թ.
Արմավիրի մարզային փուլ			Արգավանդի միջնակարգ դպրոց	8-9.02.2022թ.